

## Problems and Prospects of Ethnopolitical Engagement Reconciliation in Nagorno Karabakh: Historical Aspect

Vladimir Ponomaryov

### Summary

The paper observes problems and prospects of ethnopolitical engagement reconciliation in Nagorno Karabakh in its historical aspect since 1992 till present times, with the participation of countries – international intermediaries including Russian Federation.

**Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման հեռանկարները.**

**Պատմական տեսակետ**

**Վլադիմիր Պոնոմարյով**

**Ամփոփում**

Հոդվածում պատմական տեսանկյունից քննարկվում է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և նրա կարգավորման ուղիները՝ սկսած 1992թ. մինչև արդի ժամանակաշրջանը՝ միջազգային միջնորդներ երկրների՝ ներարյալ Ռուսաստանի Դաշնությանը մասնակցությամբ:

### ԱՇԽԱՐԴԱԲԱՐԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ<sup>1</sup>

**Օֆելյա Բաբայան**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր*

*ԱրԴԴ*

<sup>1</sup> Հոդվածն ընդունված է 12.12.13:

Դոդվածը տպագրության է երաշխավորել ԱրԴԴ հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

**Դ**այ լեզվաբանության մեջ ընդունված է գրական աշխարհաբարի հաղթանակը կապել գրապայքարի ժամանակահատվածի (1850-60-ական թթ.) հետ: Սակայն 19-րդ դարի առաջին տասնամյակներին Շուշիում աշխարհաբարն արդեն հաղորդակցման ու գրատպության լեզու էր: Այդ հարցում որոշակի ներդրում ունեն Յովսեփի վարդապետ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին, ինչպես նաև Եվրոպական կրթություն ու դաստիարակություն ստացած, խոսակցական լեզվի դերն ընթանած բացելյան քարոզիչները:

XIX դարի առաջին կեսի՝ հայոց լեզվի զարգացման պատմության վաղ աշխարհաբարի ենթաշրջանի նախայուսակայցյան ժամանակահատվածի լեզվավիճակը բնութագրելիս ընդունված է նշել երեք կարգի տարատեսակների առկայությունը՝ 1. հին գրական հայերեն կամ գրաբար, 2. «քաղաքական» կամ քաղաքացիական հայերեն և 3. բարբառներ: Այս տարբերակումը ճիշտ է արտացոլում ժամանակի լեզվական վիճակը, որ գոյություն ուներ 17-րդ դարից սկսած: 19-րդ դարի կեսերին Ստ. Նազարյանը «քաղաքացիական հայերենի»-ի փոխարեն գործածում է «հասարակաց հայախոսություն» անվանումը:<sup>1</sup>

19-րդ դարի սկզբին «քաղաքացիական հայերենն» արդեն հանդես էր գալիս տարբեր գործառույթներով, դառնում է տարբեր բարբառների ներկայացուցիչների հաղորդակցման, առևտրական, գործնական-գործարարական գրագրության, նամակագրության, դատավարության, նաև տարբեր գիտությունների, բատերգության, թերթերի, հանդեսների լեզու: Սակայն այս շրջանի աշխարհաբարը դեռևս տարերային զարգացում էր ապրում, ուներ տարբեր տեսակներ՝ նայած գրաբարից, միջին հայերենից, բարբառներից օգտվելու չափերին:

XIX դարի առաջին տասնամյակներին հայ ժողովրդի կյանքում տեղի են ունենում որոշակի տեղաշարժեր, որոնք նպաստում են աշխարհաբարի մշակման ու զարգացմանը:

Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին, բացվում են ուսումնական հաստատություններ՝ Աստրախանի Աղաբարյան վարժարանը (1810թ.), Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1815թ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824թ.), աստիճանաբար արթնանում է ազգային ինքնաճանաչության զգացումը:

<sup>1</sup> Գ. Զահոռվյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 49:

19-րդ դարի սկզբին դպրոցներ են բացվում նաև Շուշիում և Արցախի մի շարք գյուղերում:<sup>1</sup> Իսկ գրական լեզվի մշակման, հարստացման գործում անգնահատելի է հայ դպրոցի, ուսումնական հաստատությունների դերը:

Մերուած Թաղիառյանը, որ 1821թ. Եփրեմ կաթողիկոսի հետ եղել է Շուշիում, «ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ նշում է, որ այդ ժամանակ Շուշիում էին գտնվում Հովսեփ Վարդապետ Արցախեցին, ով հայտնի էր «իմաստասեր», «գիտնական», «վարժապետ» և այլ տիտղոսներով, և նրա տաղանդավոր աշակերտներից մեկը՝ արդեն մեծ գիտնական Պողոս Վարդապետ Ղարաբաղցին: «Ճատ լաւ համբաւ է քողել Շուշու բարձր դասակարգի մեջ մանաւանդ Յովսեփ Վարդապետ Տեր-Աւագեանը, աւելի յայտնի՝ Արցախեցի մականունով: Վանական գիտութեան-աստուածաբանութեան, տրամաբանութեան, ճարտասանութեան և քերականութեան հմուտ էր, յայտնի նաև իր կրօնաւորական կենցաղով Գանձասարի և ս. Յակոբի վաճքերում: Թողել է և գրաւոր աշխատութիւններ, որոնց մեջ յիշատակելի են հայերեն բառարանը գրաբարից աշխարհաբար, համաօտած տրամաբանութիւնը և քերականութիւնը»:<sup>2</sup> Իսկ Պողոս Վարդապետ Ղարաբաղցին 1824-26թթ.աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետև Շուշիում՝ 1827-34թթ.<sup>3</sup> միսիոներների դպրոցում, 1838-40 թթ.<sup>4</sup> Յայոց թեմական դպրոցում:

Շուշիում աշխարհաբարի մշակման ու գործածության հարցում կարևորվում է Բագելի միսիոներական ընկերության գործունեությունը: «Ուշադրության արժանի մի հանգամանք է նաև այն, որ 19-րդ դարի առաջին քսանամյակի կեսերին Շուշիում Բագելյան միսիոներներ Ղիտրիկը և Զարենբան ձեռնարկեցին միսիոներական գրականության հրատարակությունը այնպիսի աշխարհաբարով, որն իր մաքրությամբ և պարզությամբ գերազանց է ոչ միայն մինչև 30-ական թվականները, այլև մինչև 60-ական թվականները հրատարակված բոլոր գրքերի լեզվից»,- գրում է Գուրգեն Սևակը:<sup>5</sup>

Բագելի միսիոներական ընկերության գործունեության մասին ոգևորությամբ է խոսում Լեոն Նշելով, որ այդ տարիներին կրթությունը մատչելի էր միայն վաճառական դասակարգի մի մասին և հոգևորականությանը, իսկ երկիրը ներկայացնում էր մի «խաւար անապատ», որի դեմ հնարավոր չէր մաքարել սեփական աննշան միջոցներով: Լեոն հրաշք նման մի բան է համարում, որ «Ղարաբաղը այդ իսկ միջոցներին ասպա-

<sup>1</sup> Գ.Գրիգորյան, Գ. Յարությունյան, Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005, էջ 55:

<sup>2</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Յայոց թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 84 - 85:

<sup>3</sup> Գ.Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի պատմություն, Երևան, 1955, էջ 60:

րեզ է դառնում դպրոցական մի ամբողջ եռանդուն շարժման ժամանակի լուսաւորութեան ոգով:

Այս լուսաւոր երևոյթը, իհարկէ, չէր կարող բխել տեղական գիտակցութիւնից, տեղական ոյժերի համախմբումից: Նա օտարամուտ երևոյթ էր, նա եկել էր դրսից, ուներ օտար ծագում, ծառայում էր որոշ նպատակի, բայց այս նպատակը չէր արգելում, որ ժողովրդական մի լաւ կազմակերպուած գործ սկսուի: Անդրկովկասի և յատկապէս այդտեղ ապրող հայերի վրայ ուշադրութիւն էր դարձուած շատ հեռուից»:

Բազելի ընկերությունը քարոզիչներին հանձնարարել էր. «1. Տարածել Աստուծոյ խոսքը նոյն կողմերի ազգաց և լեզուաց մէջ, առաջնորդ ունենալով Մեծ Բրիտանիոյ և Այլասերից Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը: 2. Սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խոսքը տարածելու համար կարևոր լեզուներից մի քանիսը-արաբերէն, պարսկերէն, թաթարերէն և նոր յունարէն: Զեզանից մինն, ասած է հրահանգների մէջ, գիտէ սլաւոնական լեզուներն և նոր յունարէնի տարերքը, միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը: 3. Յիմնել մի յարմարաւոր տեղ-տպարան՝ Ս. Գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրեանք իրանց հիմնած ուսումնարանների համար»:<sup>1</sup>

1827թ. Շուշիում բացվում է Բազելի միսիոներական ընկերության ուսումնարանը, որի աշակերտների թիվը մեկ տարուն 30-40-ից հասնում է 130-ի: Փաստորեն դա մի ժողովրդական դպրոց էր: «Մանկունք զանազան դասակարգերից էին, - գրում էին միսիոներները, - բայց մենք աշխատում էինք, որ չքաւորներ լինին: Նոքա հասակով 10-18 տարեկան էին, մեծ մասամբ Ղարաբաղցի Յայք: Սովորում էին հայերէն գրել ու կարդալ, ընթեռնում էին նոր կտակարան, մասամբ և հինգ, վարժվում էին թարգմանութեան մէջ՝ գրաբարից աշխարհաբար և հակադարձութէն: Մեզանից մինն ուսուցանում էր թուաբանութիւն և աշխարհագրութիւն, կազմելով սոցա համար և հայերէն դասագրքեր: Մի ժամանակ աշակերտներից ոնանց ուսուցանում էինք նաև ռուսաց լեզու...»:<sup>2</sup> «Մենք հսկում էինք դասաւութեանն ու աշխատութեանն: ...Երկու սարկաւագունք սովորում էին մեզանից մէկի մոտ յունարէն և իբրև սորան օժանդակ լատիներէն, իսկ մէկը սովորում էր անգլերէն: Սոքա էլ օգնում էին իրանց ուսուցչին թարգմանելու

<sup>1</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Յայց Թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 86 - 87:

<sup>2</sup> Յ. Դուկասեանց, Բողոքականութիւն Կովկասու Յայց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 4:

Նոր Կտակարանը գրաբարից աշխարհաբար: Սոքա միտք ունեին երայերեն էլ սովորել, որ Ս.Գիրքը բնագրով կարդան», - գրում էին նրանք.<sup>1</sup>

Կրոնական նպատակ ունեցող Եվորպացի բողոքականները հայ երիտասարդներին այնպիսի կրթություն էին տալիս, որ, կրոնական լինելով հանդերձ, դաստիարակչական մեջ դեր էր կատարում: «Իսկապէս ժողովրդական դաստիարակութեան գործն էր սկսում Ղարաբաղում և այս կողմից Շուշու «լէմսին շկօլը» (գերմանական դպրոցը) նման էր Թիֆլիսի Ներսիսիան դպրոցին, որի հիմնադիրը դրանից առաջ էր զգացել ժողովրդական կրթութեան ահազին խորհուրդը և բաց էր արել դպրոցը հասարակութեան բոլոր խաւերի առաջ»:<sup>2</sup>

Չնայած Բագելի բողոքական քարոզիչները Շուշիում իհմնած իրենց տպարանում հրատարակում էին կրոնական-քարոյական բովանդակություն ունեցող թարգմանություններ և ինքնուրույն գրքեր, բայց և այնպես նրանք դաշնում են աշխարհաբարի առաջին տարածողները: Բագելի քարոզիչները, որոնք Եվորպական կրթություն ու դաստիարակություն ստացած մարդիկ էին, լավ էին ընթանել խոսակցական լեզվի նշանակությունը կրթության և դաստիարակության հարցում: Ինչպես վկայում է Յ. Ղուկասյանը, «այս խմբի դեկավարն և հոգին էր Ֆելիցիա Զարեմբան: Սա ի բնէ Լեհացի էր և ազնուական տնից, կոմսի տիտղոսով, ուսած էր Դորպատու համալսարանում և ստացած փիլիսոփայութեան դոկտորի աստիճան, յետոյ դարձած էր քարտուղար սենատի մեջ... Գիտնական պաշտով Զարեմբայից յետ չէին մնում նորա ընկերակից ընկերներն ևս, որոնցից մինը՝ Դիտրիխ մինչև անգամ Մոսկվայում Սալլանթեան Միք. Վարդապետի մոտ սովորել էր հայոց գրաբար լեզուն»<sup>3</sup>: Նրանցից մեկն էլ՝ Յազզը, սովորել էր «Ղարաբաղի հայ գաւառաբարբառը»:

Միսիհներական հրատարակություններ լույս էին տեսնում ինչպես Շուշիում, այնպես էլ Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանի տպարանում:

Առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1828թ.՝ «Պատմութիւն Սուլբ Գրոց»: Շուշիում հրատարակվում են նաև հայ քերականների՝ մայրենի լեզվին նվիրված գրքեր, որոնք ներկայացնում են հայերենի ուղղախոսությունը, ուղղագրությունը, քերականությունը: Այսպես, օրինակ՝ Պողոս Ներսիսյանց Ղարաբաղի վարդապետի «Յամառու հայկական քերականութիւն» (1829թ., 30էջ) աշխատությունը, Յովսեփ Արցախսեցի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 16-17:

<sup>2</sup> Լո, Պատմութիւն Ղարաբաղի Յայոց Թեմական դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 91:

<sup>3</sup> Յ. Ղուկասեանց, նշված աշխ., էջ 3:

Վարդապետի «Յամառօտ բառգիրք ի գրաբառ յաշխարաբառն (ի պէս համբակաց)» (1830թ., 398 էջ) բառարանը, Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկագեան լեզուի» (1833թ., 328 էջ) գիրքը:

Ուշագրավ է, որ թե՝ Պողոս վարդապետ Ղարաբաղցին և թե՝ Յովսեփ Արցախսեցին զգում էին, որ դժվար է գրաբարով ուսուցումը և իրենց կազմած գրքերում տալիս էին նաև գրաբար բառերի աշխարհաբար բացատրություններ:

Թե՛ Շուշիում 7-8 տարվա ընթացքում հրատարակած, թե՛ նրանց հետնորդների՝ Լազարյան ճենարանում տպագրած գրքերը աշխարհաբար էին, ժողովրդին հասկանալի լեզվով: Գ. Սևակը հետաքրքիր է համարուն այն փաստը, որ Շուշիի «Աւետարանական ժողովքի տան մէջ» վաճառվող բոլոր գրքերն ել աշխարհաբար են. «Մեզ հետաքրքրողն այժմ ոչ այդ գրքերի մեջ կրոնական բովանդակությունն է, ոչ էլ այն, որ դրանց հրատարակիչներն ու խմբագիրները օտարազգի միսիոներներ էին: Ամենից ուշագրավն ու մեզ այստեղ հետաքրքրողը այն է, որ այդ գրքերի մեջ արտահայտություն է գտել անցյալ դարի 20-ական թվականների խոսակցական աշխարհաբարը առանց գրաբարյան ավելորդ համեմունքների, որպիսիք հասուկ էին ուղղափառ լուսավորչականների լեզվին: Այս օտարազգիները ժողովրդից սովորեցին կենդանի լեզուն և այդ լեզվով էլ հրատարակեցին իրենց պրոպագանիստական գրականությունը առանց լեզվաշինարարական այս կամ այն նկրտումի»:<sup>1</sup>

Ս. Ղազարյանը նույնպես նշում է, որ «Ժամանակի Արարատյան բարբառի հիման վրա նշակվող լեզվի առանձնահատկությունները դրսկորված են նաև թարգմանական գրականության մեջ: Շուշիում 1832-35 թվականներին լույս են տեսնում աշխարհաբարով գրված մի շարք այնպիսի թարգմանություններ, որոնց լեզուն բավականաշափ մշակված ու հղկված է»:<sup>2</sup>

Յր. Աճառյանը մի շարք հատվածներ է բերում Շուշիում տպագրված թարգմանություններից՝ այդ տասնամյակների աշխարհաբարը ներկայացնելու համար: Ահա մի օրինակ՝

«Մեղքն խաղ անելոյ բան չէ, Թարգմանութիւն, Շուշի, 1833: Ես ի՞նչ զարմանալի աշխարհք է որ նորա մէջն մենք կենում ենք: Լուսոյ իշխանն և խաւարի իշխանըն, բարի մարդիքն և չար մարդիքըն. Սրբութիւնն և մեղքն՝ էդ ամէնին ծաղը անելոյ բան են շինում և ընտրվում: Բայց շատ

<sup>1</sup> Գ. Սևակ, նշված աշխ., էջ 61:

<sup>2</sup> Ս. Ղազարյան, Դայոց լեզվի համառոտ պատմություն, Երեւան, 1981, էջ 343:

վախենալի և վճաս տուող յիմարութիւն է՝ ենպէսի բաներով ծաղր անելն, որ շատ ահաւոր և ծանր են...»:<sup>1</sup>

1828-1833թթ. Շուշիում տպագրվում է 13 գիրք: 1834թ. Բագելի քարոզչական ընկերությունը Մոսկվայում աշխարհաբարով հրատարակում է իրենց թարգմանած Ավետարանը: Միսիոներական ընկերության Շուշիի տպարանը, գրում է՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտը, շարունակում գրեթե տպագրել: 1837թ. տպագրում է «Շիլիոնեան կալանաւորը»՝ թարգմանությամբ Մովսես Զոհրապյանի, 1839-ին՝ «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանց-Եսայի կաթողիկոս Յասան Զալալեանի: Մինչև Բաղդասար Եպիսկոպոսի մահը (1854թ.) լույս են տեսնում նաև «Մաշտոց», «Քերականութիւն հանառօտ», «Տետր այբբենական», «Կրօնագիտութիւն» և այլ գրքեր:<sup>2</sup>

Այսպիսով՝ 19-րդ դարի առաջին տասնամյակներին աշխարհաբարը Շուշիում արդեն հաղորդակցման և գրատպության լեզու էր:

## **Աշխարբար և Շուշի**

Օֆелиա Բաբայն

### **Резюме**

В армянском языкоznании принято становление литературного ашхарбара связывать со временем грапайкара (1850-60гг.). Но в Шуши уже в первых десятилетиях 19-го века ашхарбар был языком коммуникации и книгопечатания. В этом деле определенную роль сыграли Вардапет Овсеп Арцахеци, Вардапет Погос Карабахци, а также базельские миссионеры, которые, имея европейское образование и воспитание, хорошо восприняли важность значения и роли разговорной речи.

## **Ashkharabar and Shushi**

Ofelia Babayan

### **Summary**

In Armenian Linguistics had received the establishment of literary ashkharabar to associate with the grapaykar (1850-60). But in the first decade of XIX century in Shushi ashkharabar was also the language of communication and typography.

In this case the main role had played Vardapet Hovsep Artsakhecy, Vardapet Pogos Karabakhcy and Basel missionaries which having the European education and upbringing except very well the importance and main role of colloquial speech.

<sup>1</sup> Յր.Աճառյան, Դայոց լեզվի պատմություն, մաս 2, Երեւան, 1951, էջ 469:

<sup>2</sup> Ո. Տեր-Գասպարյան, Շուշի քաղաքը, Երեւան, 1993, էջ 87-88: